

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄՈԴԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՈՒ ՍԵՐՆԴԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ  
ԴՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ  
ՊԱՐԶՈՒՄԸ ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**Գաբրիելյան Հ.Բ., Թավադյան Գ.Կ., Նազարյան Կ.Հ.**

*Փորձաքննությունների ազգային բյուրո,  
Երևան, Հայաստան*

Հոդվածում ներկայացվել է դատապրանքագիտական բնագավառի ռեպրոսպեկտիվ փորձաքննությունների շրջանակներում միևնույն տարում արտադրված նույն մակնիշի ու մոդելի տրանսպորտային միջոցի մոդիֆիկացիայի ու սերնդի փոփոխությամբ պայմանավորված հիմնական առանձնահատկությունները: Առաջարկվող նոր մեթոդական մոտեցումը թույլ է տալիս առավել ճշգրիտ կերպով պարզել փորձաքննության օբյեկտի հանդիսացող տրանսպորտային միջոցի շուկայական արժեքն անցած ժամանակահատվածի դրությամբ: Ներկայացվող մեթոդական մոտեցմամբ նկատվում է առնվում այն հանգամանքը, որ անցած ժամանակահատվածի դրությամբ տեղեկատվական բազաներում բացակայում են տվյալ տրանսպորտային միջոցին նույնականացվող տրանսպորտային միջոցների վաճառքի վերաբերյալ անհրաժեշտ համեմատական ելակետային տվյալներ:

**Բանալի բառեր.** *ապրանքագիտական փորձաքննություն, ռեպրոսպեկտիվ փորձաքննություն, տրանսպորտային միջոց, փորձաքննության օբյեկտ, շուկայական արժեք, տեղեկատվական բազա, գնագոյացման գործոն, նույնականացում, տարբերակիչ գործոն, մոդիֆիկացիա, սերունդ:*

Դատաապրանքագիտական փորձաքննությունների շրջանակում տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների պարզման, ինչպես նաև դրանց վնասման հետևանքով պատճառված նյութական վնասի չափի հաշվարկման դեպքում շատ հաճախ, ելնելով վարույթ իրականացնող մարմինների կողմից կայացված որոշմամբ առաջադրված հարցերի բնույթից, անհրաժեշտություն է առաջանում պարզել տրանսպորտային միջոցների շուկայական արժեքը թե՛ փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ, և թե՛ անցած ժամանակահատվածի դրությամբ: Փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ փորձաքննության օբյեկտի հանդիսացող տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների պարզման համար նախ և առաջ ապրանքագետ-փորձագետի կողմից կատարվում է տրանսպորտային միջոցի փորձագիտական արտաքին ակնադիտական հետազոտություն՝ առկա ապրանքային տեսքի ու վիճակի, վերջինիս վրա հնարավոր վնասվածքների հայտնաբերման, լրակազմության և համալրվածության պարզման նպատակով լուսանկարահանման աշխատանքներ, հաշվառման վկայագրում նշված տվյալների

*Թղթակցական հասցեն՝ Գաբրիելյան Հովհաննես Բաբկենի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ապրանքագիտական բաժնի պետ, ք. Երևան, Հայաստան, Իսակովի պող., 24, e-mail: hg5995@mail.ru*

(հիմնականում նույնացման համարի) նույնականացում փորձաքննվող տրանսպորտային միջոցի և/կամ վերջինիս վրա նշված գործարանային գրառումների հետ և վազքաչափի ցուցիչի ցուցմունքի արձանագրում [1], ինչպես նաև հնարավորության դեպքում գործարկվում է տվյալ տրանսպորտային միջոցի շարժիչը (բացառությամբ կիսակցորդիչների և կցորդիչների) և կատարվում է ընթացքային փորձարկում՝ աշխատանքային վիճակը պարզելու նպատակով: Ինչպես հայտնի է տրանսպորտային միջոցների միջին շուկայական արժեքների պարզման ժամանակ հիմնականում կարևոր գնագոյացման գործոններ են հանդիսանում տրանսպորտային միջոցի մակնիշը, մոդելը, արտադրության տարեթիվը, վազքաչափի ցուցիչի ցուցմունքը, շարժիչի ծավալն ու հզորությունը, փոխանցման տուփի տեսակը, աշխատանքային վիճակը, արտաքին տեսքը, կոմպլեկտացիան, գույնը, անվադողերի մաշվածության աստիճանը, անվահեծերի տեսակը և այլ գնագոյացման գործոններ [2], ինչպես նաև տրանսպորտային միջոցի համալրվածությունը (բնական գազի /մեթան/ և/կամ հեղուկ գազի /պրոպան/ առկայությունը, գործարանային արտադրությունից բացի հավելյալ լույսերի և ձայնաազդանշանային համակարգերի առկայությունը, «օֆրոդ» համակարգերի առկայությունը, որն իրենից ենթադրում է որոշակի ձևափոխություններ տրանսպորտային միջոցների կախոցների, թափքի լրակազմող արտաքին դետալների ու հանգույցների հետ կապված և այլ համալրվածություններ), որոնց վերաբերյալ ելակետային տվյալները պարզվում են ինչպես փորձագիտական արտաքին ակնադիտական հետազոտության կատարման ժամանակ, այնպես էլ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշման հանգամանքներից, իսկ պայմանագրային հիմունքներով կատարվող փորձաքննության շրջանակներում՝ պատվիրատուի կողմից պայմանագրին կից փորձաքննությանը տրամադրված նյութերի և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալներից, նաև այլ տեղեկատվական աղբյուրներից:

Հարկ է արձանագրել, որ նկարագրված տրանսպորտային միջոցների փորձագիտական արտաքին ակնադիտական հետազոտությունից, լուսանկարահանման աշխատանքներից, աշխատունակության պարզումից և այլ անհրաժեշտ գնագոյացման գործոնների ճշգրտումից և ձեռք բերումից հետո ապրանքագետ-փորձագետի կողմից կատարվում է փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցին նույնանման տրանսպորտային միջոցների վաճառքի ՀՀ շուկայի և/կամ հայկական ու արտասահմանյան համապատասխան ինտերնետային կայքերի ուսումնասիրություններ, ինչպես նաև հաշվի են առնվում տեղեկատվական բազայում առկա ելակետային տվյալները, որի ընթացքում ընտրվում են փորձաքննվող տրանսպորտային միջոցին նույնանման՝ հնարավորինս նույն տարեթվի, մոդելի, գույնի, հզորության, կոմպլեկտացիայի և այլ անհրաժեշտ պարամետրերով հագեցված տրանսպորտային միջոցների վաճառահանված կամ արդեն իսկ վաճառված համեմատական ելակետային տվյալներ ( նվազագույնը 5 համեմատական տվյալ, )այնուհետև, համադրելով արդեն իսկ ընտրված փորձաքննվող տրանսպորտային միջոցին նույնանման պարամետրերով տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների վերաբերյալ տեղեկատվությունները և կիրառելով գնահատման համապատասխան մեթոդները (համեմատական և/ կամ ծախսային մեթոդ) [2] կատարվում են համեմատվող օբյեկտների ըստ առանձին-առանձին գնագոյացման գործոնների նույնականացում, գործակիցների ճշգրտում փորձաքննության օբյեկտ

հանդիսացող տրանսպորտային միջոցի հետ, որի ընթացքում պարզվում է փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի միջին շուկայական արժեքը:

Բայց, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, բացի փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզումից, շատ հաճախ վարույթ իրականացնող մարմինների կողմից կայացված որոշմամբ առաջադրված հարցերից ելնելով անհրաժեշտություն է առաջանում պարզել նաև տրանսպորտային միջոցների շուկայական արժեքն անցած ժամանակահատվածի դրությամբ, այսինքն՝ կատարել ռետրոսպեկտիվ փորձաքննություն: Ռետրոսպեկտիվ փորձաքննության շրջանակներում տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզման ժամանակ փորձաքննության իրականացման պահին նույնպես կատարվում է վերջիններիս փորձագիտական արտաքին ակնադիտական հետազոտություն, լուսանկարահանման աշխատանքներ, աշխատունակության պարզում և այլ անհրաժեշտ գնագոյացման գործոնների ճշգրտում: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ տվյալ պարագայում փորձաքննության իրականացման պահին ձեռք բերված որոշ ելակետային տվյալներ միանշանակ կերպով չեն կարող կիրառվել անցած ժամանակահատվածի դրությամբ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզման ժամանակ: Դրանք կարող են որոշակիորեն տարբերվել նախաձեռնողի կողմից փորձաքննությանը առաջադրված ժամանակահատվածի դրությամբ ունեցած տվյալներից, մասնավորապես՝ հիմնական տարբերակիչ գործոններ են հանդիսանում տրանսպորտային միջոցի կատարած վազբաչափի ցուցիչի ցուցմունքը, աշխատանքային վիճակը, արտաքին ապրանքային տեսքը, կոմպլեկտացիան, լրակազմությունը և համալրվածությունը, որոնց վերաբերյալ ելակետային տվյալները պարզվում են նախաձեռնողի կողմից փորձաքննությանը տրամադրված նյութերի ու փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալներից:

Ռետրոսպեկտիվ փորձաքննության շրջանակներում առաջադրված ժամանակահատվածի դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի վերաբերյալ անհրաժեշտ ելակետային տվյալների պարզումից և ձեռք բերումից հետո, կատարվում է որոշմամբ առաջադրված ժամանակահատվածի դրությամբ փորձաքննվող տրանսպորտային միջոցին նույնանման տրանսպորտային միջոցների վաճառքի համեմատական տվյալների հավաքագրում՝ օգտվելով տեղեկատվական բազայում առկա ելակետային տվյալներից: Այստեղ հարկ է նշել, որ տրանսպորտային միջոցների հետ կապված տեղեկատվական բազան իրենից ներկայացնում է տարբեր տարիներին թողարկված թերթերում ու ամսագրերում և համապատասխան ինտերնետային կայքերում զետեղված վաճառահանված հայտարարությունները, ինչպես նաև արդեն իսկ կատարված ապրանքագիտական հետազոտությունների շրջանակում հավաքագրված և մշակված տեղեկատվությունը: Հարկ է նշել, որ դեռևս 2018թ.-ին ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ապրանքագիտական փորձաքննությունների բաժնում ներդրվել է փորձագիտական տեղեկատվական բազա, որն իրենից ներկայացնում է ինչպես տարբեր տեսակի ապրանքների, այնպես էլ ՀՀ-ում վաճառահանված տրանսպորտային միջոցների և դրանց վաճառքի գների վերաբերյալ տվյալների հավաքագրում, հավաքագրված տվյալների

վերլուծություն, արխիվացում և պահպանում: Ընդ որում տվյալների հավաքագրումը համացանցային աղբյուրներից կատարվում է յուրաքանչյուր շաբաթ, իսկ զուտ ՀՀ-ի ավտոշուկաներից տվյալների հավաքագրումը կատարվում է ամսվա և/ կամ եռամսյակային կտրվածքով: Տվյալ պարագայում տեղեկատվական բազայի առկայությունն էլ ավելի է հեշտացնում օգնում ռետրոսպեկտիվ փորձաքննությունների շրջանակներում տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների պարզման գործում: Սակայն պետք է փաստել, որ վերոնշյալ բազայում 2018թ.- ին նախորդող տարբեր ժամանակահատվածների դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների պարզման նպատակով անհրաժեշտ տվյալ ժամանակահատվածներին համապատասխան ժամանակահատվածի դրությամբ փորձաքննվող տրանսպորտային միջոցին նույնանման տրանսպորտային միջոցների վաճառքի վերաբերյալ անհրաժեշտ համեմատական բավարար ելակետային տվյալները բացակայում են: Տվյալ պարագայում հարկ է նշել, որ անդրադառնալով ՀՀ-ում գործող պետական և մասնավոր հատվածում ապրանքագիտական փորձագիտական ծառայություններ մատուցող տարբեր կազմակերպություններում տվյալ խնդրին վերաբերող անցած ժամանակահատվածի դրությամբ տրանսպորտային միջոցների շուկայական արժեքի պարզման հնարավոր առկա և կիրառվող մեթոդական մոտեցումներին, պարզվում է, որ նման դեպքերում, եթե փորձաքննվող ժամանակահատվածի դրությամբ անհրաժեշտ համեմատական ելակետային տվյալներ առկա չեն լինում նշված կազմակերպությունների տեղեկատվական բազաներում, հիմնականում նախաձեռնողի կողմից առաջադրված հարցերի պատասխանները թողնվում են անհետևանք՝ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցներին նույնանման տրանսպորտային միջոցների վաճառքի վերաբերյալ անհրաժեշտ համեմատական ու բավարար ելակետային տվյալների բացակայության պատճառով:

Ուսումնասիրելով տրանսպորտային միջոցների շուկայական արժեքի որոշման հետ կապված մասնագիտական գրականությունը (օրինակ [1] և [2]), իմի է բերվել թե՛ փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ, և թե՛ անցած ժամանակահատվածի դրությամբ կոնկրետ տարեթվի արտադրության տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզման հետևյալ մեթոդական մոտեցումը, այն է՝ փորձաքննվող ժամանակահատվածին նախորդող տարվա դրությամբ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզման ժամանակ հաշվի է առնվում վերջինիս ծառայության (շահագործման) ժամկետը, այլ ոչ թե տրանսպորտային միջոցի արտադրության տարեթիվը [2]: Օրինակ, եթե տրանսպորտային միջոցի արտադրության տարեթիվը 2017թ.-ն է և վերջինիս շուկայական արժեքն անհրաժեշտ է պարզել ներկա ժամանակահատվածին նախորդող 2022թ.-ի դրությամբ, ապա որոշվում է ոչ թե 2017թ.-ի արտադրության տրանսպորտային միջոցի շուկայական արժեքը, այլ 2018թ.-ի արտադրության 5 տարեկան տրանսպորտային միջոցի շուկայական արժեքը 2023թ.-ի դրությամբ, հաշվի առնելով այն կարևոր հանգամանքները, որ թե՛ 2017թ.-ի արտադրության, և թե՛ 2018թ.-ի արտադրության տրանսպորտային միջոցներն ունեն նույն մոդիֆիկացիան (кyзoв) և նույն սերնդի արտադրության են:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից, հարկ է նշել, որ նշված մեթոդական մոտեցումը կիրառելի է սահմանափակ դեպքերում, այսինքն՝ միայն այն դեպքերում, երբ գործ ունենք նույն մակնիշի, մոդելի, մոդիֆիկացիայի (թափքը) և նույն սերնդի տրանսպորտային միջոցների հետ, բայց երբ տեղի է ունենում միևնույն տարեթվում արտադրված նույն մակնիշի ու մոդելի տրանսպորտային միջոցի մոդիֆիկացիայի (թափքը) և սերնդի փոփոխություն, այստեղ անհրաժեշտություն է առաջանում կիրառել նոր մեթոդական մոտեցումներ՝ նշված արդեն իսկ հին և փոփոխված մոդիֆիկացիայով ու սերնդով, բայց նույն մակնիշի, մոդելի և նույն տարեթվի արտադրության տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների միջև եղած տարբերությամբ նախորդ սերնդից հաջորդ սերնդին անցման գործակից ստանալու համար: Սա հիմնավորվում է նրանով, որ խորհրդային տարիներին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող տարբեր երկրներում (հիմնականում Ռուսաստանում) որոշ մեքենաշինական գործարաններ յուրաքանչյուր նախորդ սերնդից հաջորդ սերնդի տրանսպորտային միջոցի արտադրման դեպքում նշում էին նախորդ սերնդից հաջորդ սերնդին անցման գործակիցը, որը կիրառվում էր դատաստանաբազմափուլական փորձաքննությունների շրջանակում: Հաշվի առնելով նշված հանգամանքը, կատարելով տարբեր տարիների կտրվածքով մի շարք ուսումնասիրություններ և համադրված վերլուծություններ՝ կապված նույն մոդիֆիկացիայով ու սերնդով և արդեն իսկ փոփոխված մոդիֆիկացիայով ու սերնդով տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների հետ, ինչպես նաև օգտվելով վերոգրյալում արդեն իսկ նշված նույն մակնիշի, մոդելի, մոդիֆիկացիայի (թափքը) և նույն սերնդի տրանսպորտային միջոցների գնահատման մեթոդական մոտեցումից, հարկ է առաջ քաշել նոր մեթոդական մոտեցում, որի էությունը կայանում է նրանում, որ վերջինիս կիրառմամբ հնարավորություն է ընձեռվում պարզել ռետրոսպեկտիվ փորձաքննության շրջանակներում առաջադրված ժամանակահատվածի դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի շուկայական արժեքը: Առաջարկվող նոր մեթոդական մոտեցումը կիրառելի է այն դեպքերում, երբ տրանսպորտային միջոցների մոդիֆիկացիայի ու սերնդի փոփոխությունը կատարվել է միևնույն տարում (օրինակ՝ հին սերնդի արտադրությունն ավարտվել է 2009թ.-ին և դրան հաջորդող սերնդի արտադրությունը սկսվել է նույնպես 2009թ.-ին: ) Նոր մեթոդական մոտեցման հիմքում ընկած են հետևյալ այն կարևորագույն սկզբունքները, որոնց առկայության դեպքում միայն հնարավոր կլինի իրականացնել ռետրոսպեկտիվ փորձաքննությունը, դրանք են.

1. որոշմամբ առաջադրված գնահատման ժամանակահատվածի դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի արտադրության տարեթիվը և/կամ տարիքը,
2. փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի մոդիֆիկացիայի և հաջորդ սերնդի փոփոխման տարեթիվը,
3. փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի մոդիֆիկացիայի և սերնդի փոփոխման տարեթվին համապատասխան նույն տարեթվի արտադրության հին ու նոր մոդիֆիկացիաների ու սերնդի տրանսպորտային միջոցների առանձին-առանձին շուկայական արժեքների պարզումը փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ,



4. նույն տարեթվի արտադրության հին ու նոր մոդիֆիկացիաների ու սերնդի տրանսպորտային միջոցների շուկայական արժեքներից ելնելով համապատասխան հին սերնդից նոր սերնդի անցման գործակցի ստացումը,

5. փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի գնահատման ժամանակահատվածի դրությամբ ունեցած տարիքին համապատասխան նույն տարիքի, բայց արդեն իսկ փոխված մոդիֆիկացիայով ու սերնդով տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզումը,

6. փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի տարիքին համապատասխան նույն տարիքի, բայց արդեն իսկ փոփոխված մոդիֆիկացիայով ու սերնդով տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի և արդեն իսկ ստացված հին սերնդից նոր սերնդի անցման գործակցի կիրառմամբ փորձաքննվող տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզումը որոշմամբ առաջադրված ժամանակահատվածի դրությամբ:

Վերոնշյալ պայմաններում կոնկրետ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի գնահատման գործողության մեխանիզմը ներկայացվում է ստորև: Անհրաժեշտ է եղել պարզել 2008թ.-ի արտադրության «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի միջին շուկայական արժեքը 2016թ.-ի դրությամբ: Փորձանության կատարման ժամանակահատվածի դրությամբ իրականացվում է վերջինիս անհրաժեշտ փորձագիտական ակնադիտական հետազոտություն և լուսանկարահանում, ինչպես նաև հիմք են ընդունվում ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված 2016թ.-ի դրությամբ փորձաքննության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցի կատարած վազքաչափի ցուցիչի ցուցմունքի, աշխատանքային վիճակի, արտաքին ապրանքային տեսքի, լրակազմության ու համալրվածության և վերջինիս աշխատունակ վիճակում գտնվելու վերաբերյալ ելակետային տվյալները: Այնուհետև, համապատասխան տեղեկատվական աղբյուրների (ինտերնետային կայքերի) ուսումնասիրությամբ պետք է պարզել 2008թ.-ի արտադրության փորձաքննության օբյեկտ հանդիսացող «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի սերունդն ու մոդիֆիկացիան: Ներկայացված օրինակի համաձայն տվյալ տրանսպորտային միջոցի հաջորդ մոդիֆիկացիայի ու սերնդի (4-րդ սերունդ) փոփոխությունը տեղի է ունեցել 2009թ.-ին: Հաշվի առնելով փորձաքննության օբյեկտ հանդիսացող 8 տարվա արտադրության «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի վերաբերյալ անհրաժեշտ ելակետային տվյալները և ընդունելով, որ արդեն իսկ փոխված մոդիֆիկացիայի ու 4-րդ սերնդի, 2013թ.-ի արտադրության, այսինքն՝ 8 տարեկան, «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենան ունի նույն վազքաչափի ցուցիչի ցուցմունքը, արտաքին ապրանքային տեսքը, լրակազմությունն ու համալրվածությունը և գտնվում է աշխատունակ վիճակում, ինչ որ 8 տարեկան 3-րդ սերնդի ավտոմեքենան և կիրառելով գնահատման համեմատական մեթոդը՝ վաճառահանված նույն մակնիշի և նույն տարեթվի արտադրության տրանսպորտային միջոցների համեմատական տվյալների ճշգրտման նպատակով, որոշվել է նոր մոդիֆիկացիայի և 4-րդ սերնդի 8 տարեկան «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի միջին շուկայական արժեքը փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ, որը կազմել է 12700000 /տասներկու միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ: Գնահատման համեմատական մեթոդի կիրառմամբ փորձաքննության

կատարման ժամանակահատվածի դրությամբ որոշվել է նաև 2009թ.-ի արտադրության, հին ու նոր մոդիֆիկացիաների ու սերնդի «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի առանձին-առանձին միջին շուկայական արժեքը, հաշվի առնելով, որ երկու դեպքում էլ նշված տրանսպորտային միջոցներն ունեն նույն վազքաչափի ցուցիչի ցուցմունքը, արտաքին ապրանքային տեսքը, լրակազմությունն ու համալրվածությունը և գտնվում են աշխատունակ վիճակում, որի դեպքում 3-րդ սերնդի ու մոդիֆիկացիայի ավտոմեքենայի միջին շուկայական արժեքը փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ կազմել է 8350000 /ութ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ 4-րդ սերնդի ու մոդիֆիկացիայի ավտոմեքենայի միջին շուկայական արժեքը փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ կազմել է 11200000 /տասնմեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ: Վերջիններիս միջին շուկայական արժեքների պարզումից հետո հաշվարկվել է նույն տարեթվի՝ 2009թ.-ի արտադրության, հին մոդիֆիկացիայից ու 3-րդ սերնդից նոր մոդիֆիկացիայի ու 4-րդ սերնդի անցման գործակիցը, որը կազմել է  $11200000/8350000=1.34$ , որից ելնելով և տվյալ գործակիցը կիրառելով փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ արդեն իսկ պարզված 8 տարվա արտադրության փոխված մոդիֆիկացիայով ու 4-րդ սերնդի «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի միջին շուկայական արժեքի նկատմամբ, որոշվել է 2008թ.-ի արտադրության փորձաքննության օբյեկտ հանդիսացող « TOYOTA LAND CRUISER PRADO 2.7L» մակնիշի ավտոմեքենայի միջին շուկայական արժեքը 2016թ.-ի դրությամբ, որն էլ կազմել է  $12700000/1.34=9477611.94$ , կլորացված՝ 9480000 ՀՀ դրամ:

Հարկ է նշել, որ ներկա դրությամբ ուսումնասիրելով արդեն իսկ վերոգրյալում նշված նույն տարեթվում արտադրված 3- րդ սերնդի և 4- րդ սերնդի տրանսպորտային միջոցների միջին գնային սեգմենտները, ևս մեկ անգամ հաստատվում է, որ վերը նշված 3- րդ սերնդից նոր մոդիֆիկացիայի ու 4-րդ սերնդի անցման գործակիցը էականորեն չի տարբերվում ներկայումս ստացված գործակցից և այն օրինաչափ է ռետրոսպեկտիվ փորձաքննության շրջանակներում տվյալ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի պարզման դեպքում՝ նոր մեթոդական մոտեցման կիրառմամբ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալում կատարված հաշվարկների արդյունքներից, կարելի է ևս մեկ անգամ փաստել, որ ռետրոսպեկտիվ փորձաքննության շրջանակներում առաջարկվող նոր մեթոդական մոտեցումը հնարավորություն է ընձեռում առավել ճշգրիտ ու ստույգ հաշվարկել և հետևաբար նաև պարզել այն տրանսպորտային միջոցների շուկայական արժեքները, որոնց մոդիֆիկացիայի ու սերնդի փոփոխությունը կատարվել է միևնույն տարում:

## Գրականության ցանկ

1. Исследование автотранспортных средств в целях определения стоимости восстановительного ремонта и оценки /Методические рекомендации для судебных экспертов, - М.: ФБУ РФЦСЭ при Минюсте РФ, 2013, -128с..
2. Махнин Е.Л., Федотов С.В., Казюлин А.С. Исследование автотранспортных средств в целях определения стоимости восстановительного ремонта и оценки: методическое руководство для судебных экспертов, Теория и практика судебной экспертизы, № 1 (9), 2008, с.148-174.

## СПЕЦИФИКА ТОВАРОВЕДЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ ПО ОПРЕДЕЛЕНИЮ РЫНОЧНОЙ СТОИМОСТИ ИЗМЕНЁННОЙ МОДИФИКАЦИИ И ПОКОЛЕНИЯ ТРАНСПОРТНОГО СРЕДСТВА ПО СОСТОЯНИЮ НА ПРОШЕДШИЙ ПЕРИОД

*Габриелян О.Б., Тавадян Г.К., Назарян К.О.*

*Основное внимание в статье уделено тем принципам и особенностям проведения товароведческой экспертизы, которые вызваны сменой модификации и поколения транспортного средства одной марки и модели, выпущенного в одном и том же году. Основное содержание исследования составляет выстраивание нового методического подхода позволяющего более полно и точно определять рыночную стоимость, по состоянию на прошедший период, транспортного средства являющегося объектом экспертизы. В статье приведена обобщенная характеристика представленного методического подхода с учётом того факта, что по состоянию на прошедший период в информационной базе данных отсутствуют необходимые сравнительные исходные данные о реализации транспортных средств, отождествляемых с данным транспортным средством.*

**Ключевые слова:** *товароведческая экспертиза, ретроспективная экспертиза, транспортное средство, рыночная стоимость, информационная база данных, фактор ценообразования, отличительный признак.*

## THE SPECIFICITY OF COMMODITY EXPERTISE TO DETERMINE THE MARKET VALUE OF A MODIFIED MODIFICATION AND GENERATION OF A VEHICLE AS OF THE PAST PERIOD

*Gabrielyan O., Tavadyan G., Nazaryan K.*

*The main attention in the article is paid to the principles and features of conducting a commodity expertise, which are caused by a change in the modification and generation of a vehicle of the same brand and model, released in the same year. The main content of the study is the construction of a new methodological approach that allows to more fully and accurately determine the market value, as of the past period, of a vehicle that is the object of expertise. The article provides a generalized description of the presented methodological approach, taking into account the fact that, as of the past period, the information database does not contain the necessary comparative initial data on the implementation of vehicles identified with this vehicle.*

**Keywords:** *commodity expertise, retrospective expertise, vehicle, market value, information database, pricing factor, distinguishing feature.*

Ներկայացվել է խմբագրության 15.05.2023

Ընդունվել է տպագրության 12.06.2023